ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հունիսի 2023 թվականի № -Ա

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ», «ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ԵՎ «ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի №564-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 29-ի №520-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Սահմանել՝

1) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրակայանից առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը՝ 15.095 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝

ա. համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկից առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը՝ 6.42 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի.

բ. կողմից էլեկտրաէներգետիկական շուկայում հաշվեկշռման ծառայության մատուցման նվազագույն սակագինը՝ 15.095 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի.

գ. կողմից էլեկտրաէներգետիկական շուկայում հաշվեկշռման ծառայության մատուցման առավելագույն սակագինը՝ 27.905 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի.

դ. կողմից հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստի ապահովման ծառայության մատուցման սակագինը (հզորության վճարը)՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 258.95 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցներին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը՝ 1.3099 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սահմանել, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագների հաշվարկներում ներառված և փաստացի չծախսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունից և (կամ) Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի մարման և սպասարկման գումարները փոխանցվում են «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ 2022 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2023 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում փաստացի գործունեությամբ պայմանավորված անհրաժեշտ հասույթի շեղման արդյունքում ընկերության մոտ ձևավորված վնասի և մասնակիորեն շահագործման ու պահպանման ծախսերի փոխհատուցման նպատակով՝ հետևյալ ժամկետներում և չափերով.

1) մինչև 2023 թվականի նոյեմբերի 30-ը՝ 1219.77 միլիոն դրամ,

2) մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 1476.12 միլիոն դրամ:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Էլեկտրա-էներգետիկական համակարգի սակագները սահմանելու, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 10-ի №443-Ա, 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №476-Ա և 2022 թվականի հունիսի 29-ի №266-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» №564-Ա որոշման 2-րդ կետի 1-ին, 3-րդ ենթակետերը և 3-րդ կետը:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից յոթնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի օգոստոսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
հունիսի 2023թ.